Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի
Ապրիլի 15-ի N -Ա որոշման

# ՀԱՅՏ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | Գյումրի համայնքի սոցիալական բնակարանների և մշակութային կենտրոնների վերանորոգում |
| Մարզ | Շիրակ |
| Համայնքը /համայնքները | Գյումրի |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | Գյումրի համայնքը Շիրակի մարզի մարզկենտրոնն է և մայրաքաղաքից գտնվում է 118 կմ հեռավորության վրա |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | 112 400 |
| Սահմանամերձ համայնք/բնակավայր | Գյումրի համայնքը չի հանդիսանում սահմանամերձ համայնք |
| Բարձր լեռնային համայնք /բնակավայր | Գյումրի համայնքը չի հանդիսանում բարձր լեռնային համայնք |
| Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | Համայնքը ունի գլխավոր հատակագիծ,որը հաստատվել է03.03.2005թ.-ին |
| Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br><br>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,<br><br>-<br><br>գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,<br><br>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,<br><br>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ | Գյումրի համայնքը ամբողջությամբ (100%) ապահովված է ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերով, առկա է 24 ժամյա ջրամատակարարում, որից օգտվում են համայնքի բոլոր բնակիչները:Գերմանական KFW բանկի միջոցներով մետաղական հնամաշ խողովակները փոխարինվել են պլաստմասե խողովակներով՝ կազմելով քաղաքի ջրամատակարարման ցանցի 80%:<br><br>Քաղաքը ամբողջությամբ գազաֆիկացված է:<br>Գազամատակարարման համակարգից օգտվող բնակչությունը կազմում է 97%:<br><br>Ոռոգման համակարգից օգտվող բնակչության թիվը կազմում է 0%, քանզի քաղաքում ոռոգման ցանց առկա չէ: |

| | |
|---|---|
| | Լրիվ կամ մասնակի փողոցային լուսավորություն կա քաղաքի թվով 250 փողոցներից 193-ում, նրբանցքներում, փակուղիներում, անցումներում,որը կազմում է ընդհանուր մոտ 77%-ը:Լուսակետերի քանակը կազմում է մոտ 6800,որից էներգախնայող լամպերը կազմում են մոտ 40%,որն աստիճանաբար ավելանում է : Միաժամանակ աշխատանքներ են տարվում ներթաղամասային բակային տարածքների լուսավորության ապահովման համար: |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | 1988թ աղետալի երկրաշարժի հետևանքով մինչ օրս հազարավոր գյումրեցի ընտանիքներ բնակվում են ժամանակավոր կացարաններում, որոնք տարիների ընթացքում ֆիզիկապես ու բարոյապես մաշված են և ոչ պիտանի բնակության համար: Ժամանակավոր տնակները շատ հաճախ զուրկ են տարրական կոմունալ հարամարություններից, ինչը ռիսկեր է պարունակում տնակների բնակիչների առողջության հետ կապված, հատկապես՝ խոցելի խմբերի համար (տարեցներ, երեխաներ, հաշմանդամություն ունեցող անձիք): Առանձին տնակներում բնակությունն անհնար է հատկապես ձմռան ամիսներին, երբ արձանագրվում են ցրտահարության դեպքեր:<br><br>Տնակներից շատերը տեղադրված են օտարման ոչ ենթակա ու հանրային տարածքներում ինչի արդյունքում նրանք խոչընդոտ են հանդիսանում տարածքի բարեկարգման ու իբրև հանրային տարածքի օգտագործմանը:<br><br>Ծրագրով նախտեսվում է հիմնանորոգել Գյումրու համայքապետարանին սեփականության իրավունքով պատկանող թվով 15 բնակարան, որոնք հիմնանորոգումից հետո կտրամադրվեն անօթևանության կարգավիճակ ունեցող ընտանիքներին:<br><br>Բնակարանները շահառուներին կհանձնվեն անհատույց օգտագործման՝ առանց վարձավճարի, միաժամանակ Գյումրու համայնքապետարանը կպահպանի այդ բնակարանների հանդեպ իր սեփականության իրավունքը, իսկ տվյալ ընտանիքները կպահպանեն իրենց անօթևանի կարգավիճակը:<br><br>Բնակարանների տրամադրման առաջնահերթությունը կտրվի առավել վատթար վիճակում գտնվող, սոցիալապես խոցելի համարվող և քաղաքաշինական խնդիրներ առաջացնող տնակների բնակիչներին:<br><br>Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ»-ի փայտյա պատշգամբը.<br><br>Սկսած 1980 թվականից շենքը ներառվել է Կումայրի պատմամշակութային արգելոց- թանգարանի կողմից պահպանվող |

| | |
|---|---|
| | պատմամշակության ժառանգության կառույցների ցանկում: Պատկերասրահը պահպանում և ցուցադրում է Ասլամազյան քույրերի գեղանկարչական, գրաֆիկական և խեցեգործական բացառիկ աշխատանքները:<br><br>«Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ»-ի փայտյա պատշգամբի վերանորոգումը խիստ անհրաժեշտություն է. պատշգամբի որոշ հատվածներ արդեն անջատումներ ունեն հիմնական պատերից, պատշգամբը պահող փայտե սյուները քայքայված են, բազրիքները ունենք ճոճք եւ դեֆորմացիաներ, պատշգամբի հատակին կանգնելն արգելված է: Վթարային վիճակը տարեցտարի ավելի տխուր պատկեր է ստանում եւ բարդացնում վերանորոգման գործընթացը:<br><br>Զբոսաշրջային մեծ ներհոսք ունեցող քաղաքի հիմնական կանգառներից է պատկերասրահը՝ հազարավոր հյուրերով եւ վթարային պատշգամբը ոչ միայն հարիր չէ մշակութային քաղաքի կենտրոնին, այլեւ վտանգավոր է թանգարանի այցելուների համար:<br><br>Ծրագրով նախատեսվում է նաև հիմնանորոգել Գյումրու Ստ. Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնը: Սա առաջին մանկական թատրոնն է Հայաստանում: Կտուրի վերանորոգումը վաղուց հրամայական է. մասնակի նորոգումները թույլ են տալիս միայն ժամանակավոր լուծումներ գտնել՝ վերացնելով կաթոցը թատրոնի դահլիճում: Բայց շենքի խոնավությունն ու պատերի քայքայումը շարունակվում են:<br><br>Դահլիճի աթոռներն ու գորգածածկը փոփոխման կարիք ունեն, հատակն ու պատերը՝ նորոգման: Բեմի եւ հետնաբեմի հատվածում եւս կա վերանորոգման անհրաժեշտություն:<br><br>Նորոգ չլինելու պատճառով շքեղ շենքի տարածքի միայն 40-50 տոկոսն է օգտագործվում. երկրորդ հարկի դահլիճն առհասարակ չի օգտագործվում: Անմխիթար վիճակում են արհեստանոցներն ու պահեստային սենյակները:<br><br>Վերանորոգման դեպքում ե՛ւ որպես թատրոն, ե՛ւ որպես մշակութային կենտրոն շենքը կարող է գործարկվել բազմաֆունկցիոնալ նշանակությամբ՝ ապահովելով մշակութային հարուստ կյանք: |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | 1. թվով 15 ընտանիքների կյանքի որակի բարձրացում՝ շուրջ 34 տարի տնակային պայմաններում ապրելուց հետո կտեղափոխվեն նոր, հիմնանորոգված ու հարմարավետ բնակարաններ:<br><br>2. Գյումրի քաղաքը կազատվի 15 ժամանակավոր կացարաններից հնարավորություն տալով տարածքներն |

| | |
|---|---|
| | օգտագործել հանրային նշանակությամբ։<br><br>3. Մասնակիորեն կբարելավվի քաղաքի միջավայրը դառնալով ավելի գրավիչ։<br><br>4. Իրականացվող ծրագիրը կարող է խթանիչ լինել տարբեր բարեգործական կազմակերպությունների համար սոցիալական բնակարանաշինության հարցում։<br>5. Գեղեցիկ ու բարեկարգ տեսք կստանան Ասլամազյան քույրերի պատկերասրահին ու Գյումրու տիկնիկային թատրոնը, ինչպես նաև հնարավորություն կընձեռվի վերջիններս ամբողջությամբ ծառայեցնել ըստ նշանակության։<br>6. Իրականացվող ծրագիրը կարող է խթանիչ լինել տարբեր բարեգործական կազմակերպությունների համար սոցիալական բնակարանաշինության հարցում։ |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | • Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր։<br>• Կազմակերպել օրենքով սահմանված կարգով մրցույթ։<br>• Մրցույթի արդյունքների ամփոփում, պայմանագրերի կնքում։<br>• Հետևել կատարվող շին աշխատանքների որակին և ծրագրի վերջնական արդյունքին։<br>• Աշխատանքի հանձնում-ընդունում և շահագործում |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում՝ բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի** | Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են և իրականացման արդյունքում Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքը կավելանա 102 000 000 դրամ (մեկ հայրուր երկու միլիոն ՀՀ դրամ)։ |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | Ծրագրի շահառուներն են՝ Գյումրի քաղաքի թվով 15 անօթևան ընտանիքների բնակիչները և տնակներից ազատվող տարածքներին կից բնակվող գյումրեցիները։ |
| **Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը** | Ծրագրի իրականացման ընթացքում համայնքապետարանի կողմից ստեղծվող հիմնական աշխատատեղերի ավելացում չի նախատեսվում, իսկ մասնավոր հատվածի (պետական գնումների համապատասխան ընթացակարգով հաղթող ճանաչված մասնակցի) կողմից ստեղծվող ժամանակավոր/հիմնական աշխատատեղերի քանակը ներկա պահին հստակ չէ։ |
| **Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը** | Նախորդ տարվա բյուջեն՝ 6,717,198,225 դրամ. |

| | Պլանը | Փաստացին | Տոկոսը |
|---|---|---|---|
| Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները | 5,962,256,303 | 5,913,070,863 | 99.2 |
| այդ թվում՝ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| -Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 4,661,666,303 | 4,503,723,677 | 96.6 |
| - Սեփական եկամուտներ | 1,789,067,750 | 1,631,235,674 | 91.2 |
| -Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 170,070,000 | 751,201,710 | 441.7 |
| Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, | 6,717,198,225 | 5,793,749,848 | 86.3 |
| որից՝ | | | |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 4,011,470,003 | 3,659,243,259 | 91.2 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 2,705,728,222 | 2,134,506,589 | 78.9 |
| Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,որից՝ | | | |
| - ճանապարհաշինություն | 2,041,366,222 | 1,701,848,093 | 83.4 |
| -ջրամատակարարում | | | |
| -փողոցային լուսավորություն | 1,492,500 | 290,000 | 19.4 |
| -գյուղատնտեսություն | 8,400,000 | 5,616,800 | 66.9 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

Ընթացիկ տարվա բյուջեն՝ 6,120,857,941 դրամ.

| | Պլանը |
|---|---|
| Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում | 4,969,164,863 |
| այդ թվում՝ | |
| -Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 4,717,234,721 |
| -սեփական եկամուտներ | 1,911,077,221 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 174,959,200 |
| **Ընդամենր՝ համայնքի բյուջեի** | **6,120,857,941** |

| | |
|---|---|
| **ծախսեր,** | |
| որից՝ | |
| **- Վարչական բյուջեի ծախսեր** | **4,175,305,926** |
| **-Ֆոնդային բյուջեի ծախսեր** | **1,945,552,015** |
| Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,որից՝ | |
| - Շենքերի և շինությունների կառուցում | 81,503,600 |
| - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 1,628,753,415 |
| - Տրանսպորտային սարքավորումներ | 66,000,000 |
| - Վարչական սարքավորումներ | 4,339,000 |
| - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 26,546,000 |
| -Աճեցվող ակտիվներ | 8,000,000 |
| - Նախագծահետազոտական ծախսեր | 130,410,000 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով**

Գյումրի համայնքի 2022 թվականի բյուջեի մուտքերի հաշվին սույն ծրագրի իրականացումը հնարավոր չէ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները գրեթե ամբողջությամբ ուղղվում է համայնքի պարտադիր խնդիրների իրականացմանը, մասնավորապես

| | |
|---|---|
| **- Վարչական բյուջեի ծախսեր** | **4,175,305,926** |
| Համայնքի վարչական բյուջեի պլանավորված ծախսերը,որից՝ | |
| -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 1,066,370,726.00 |
| -Էներգետիկ ծառայություններ | 211,551,300.00 |
| -Կոմունալ ծառայություններ | 43,851,700.00 |
| -Կապի ծառայություններ | 9,157,300.00 |
| -Ապահովագրական ծախսեր | 5,532,000.00 |
| -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 6,980,000.00 |
| -Արտագերատեսչական ծախսեր | 124,000.00 |
| -Ներքին գործուղումներ | 35,650,000.00 |
| -Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 2,300,000.00 |
| -Տեղակատվական ծառայություններ | 5,000,000.00 |
| -Ներկայացուցչական ծախսեր | 11,624,500.00 |
| -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 27,998,000.00 |
| -Մասնագիտական ծառայություններ | 35,192,700.00 |
| -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 155,500,000.00 |
| -Մեքենաների և | 6,170,000.00 |

| | | |
|---|---|---|
| | սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | |
| | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 9,985,000.00 |
| | -Գյուղատնտեսական ապրանքներ | 3,465,000.00 |
| | -Տրանսպորտային նյութեր | 117,960,900.00 |
| | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 54,718,500.00 |
| | -Ներքին վարկերի տոկոսավճարներ | 130,000,000.00 |
| | -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 1,811,701,300.00 |
| | -Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին | 44,660,000.00 |
| | -Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից | 7,000,000.00 |
| | -Բնակարանային նպաստներ բյուջեից | 1,450,000.00 |
| | -Այլ նպաստներ բյուջեից | 80,410,000.00 |
| | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 236,466,600.00 |
| | -Պարտադիր վճարներ | 21,618,400.00 |
| | -Այլ ծախսեր | 32,868,000.00 |
| Ծրագրի ընդհանուր բյուջեն, --------------- | 102 000 000 (մեկ հարյուր երկու միլիոն ՀՀ դրամ): - 100% | |
| այդ թվում՝ | | |
| - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը՝ _________դրամ- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _________ դրամ, | 2 040 000 ՀՀ դրամ (երկու միլոն քառասուն հազար ՀՀ դրամ) | |
| - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _________ դրամ, | 1 836 000 ՀՀ դրամ (մեկ միլիոն ութ հարյուր երեսունվեց հազար ՀՀ դրամ) | |
| - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _________ դրամ, | 612 000 ՀՀ դրամ (վեց հարյուր տասներկու հազար ՀՀ դրամ) | |
| - գոյություն ունեցող շենք- | | |

| | |
|---|---|
| շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ ________ դրամ,<br><br>-ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ ——— դրամ<br><br>-ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը՝ ________դրամ | |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | 56 100 000 (հիսունվեց միլիոն հարյուր հազար ՀՀ դրամ)(.55%) |
| Այլ ներդրողներ | 0 դրամ ( 0%), նշել ներդրողի անունը: |
| Ծրագրի իրականացման տևողությունը | Սկիզբը հունիս 2022թ.<br><br>Տևողությունը 5 ամիս: |
| Ծրագրի ծախսերը | 102 000 000 (մեկ հարյուր երկու միլիոն ՀՀ դրամ):<br><br>Ծախսերը ավելի ճշգրիտ կներկայացվեն նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմելուց հետո: |
| Ամսաթիվ | 24 մարտ 2022թ. |

Համայնքի տնտեսական պատասխանատու
+37455666229, karapet.mkhchian@gmail.com

Կարապետ մխչյան

Գյումրի համայնքի ղեկավար

Վարդգես Սամսոնյան